

Մարաշէն՝ Եփրատի վրայ կառուցուած կայանները երթալու համար հոռոմայեցիները շինած են ճամբաներ, որոնց հետքերուն դրեթէ ամէն քայլափոխիդ կը հանդիպիս: Հոռոմայեցիները նախամեծար համարած են իրենց զինուորական ճամբաները շինել ցածլիկ բլուրներու վրայ, առ ի զդուշութիւն թշնամի յարձակումներու եւ կամ դիտարանի պաշտօն տալով անոնց: Մենք այդ ճամբաներուն կը հանդիպինք Մարաշէն արեւելք ութը քիլոմէր հեռաւորութեան՝ Օտուն Սալա կոչուած տեղը, անտառախիտ բլրակներու վրայ, որ հարիւր յիսուն մեդր երկարութեամբ ու վեցէն հինգ մեդր լայնքով խոշոր քարերով սալաշատակուած հոռոմէական ամէնէն դեղեցիկ ու ամէնէն անաղարտ մնացած ճամբայ մըն է:

Այս ճամբան կ'երկարի դէպի «Ծովք»՝ Ներսէս Շնորհալիի ծննդավայրը, միշտ հետեւելով բլուրներու դաղաթներու վրայէն. եւ ապա փոքր վայրէջքով մը կը մօտենայ «Ծովք» լիճերուն: Ծիւտ այդ կէտին վրայ կայ կրկին բարձր կամարով շինուած կամուրջ մը եւ մօտը՝ քրտական դիւղ մը Բէրմուշ անունով, որ անկասկած հոռոմէական շինուածք մըն է, կամուրջը եւ դիւղը՝ հայկական անունով ծանօթ:

Իկոնիոյ Մեսուտ սուլթանը, 1149 թ., կոկիտունէն հոռոմէական ճամբաներէն անցնելով կ'արշաւէ Եփրատացեաց երկիրը դէպի Թիւ Պէշար (Թիւն Աւետեաց), կը գրաւէ Մարաշը եւ կը շարունակէ ճամբան: Ծովքի պահլաւունիները, կաթողիկոսն ու իր եղբայրը կ'իմանան այս աղէտը, որու մասին Շնորհալի կը գրէ...

Մասուտ սուլթանն Յիկոնացեաց Եկեալ յաշխարհ դերմանացեաց Առեալ զաւանս քաղաքայնոց Մինչ ի կողմանս Եփրատացեաց Իսկ հայրապետ հանուր հայոց.....

Փախուստի կը դիմէ ու կ'ապաստանի Թորոս իշխանի մօտ, Այլասեւքար զղեակին մէջ:

Մեք ի զղեկէն որ Ծով կոչի
Որ սեփական մեր էր տեղի...
Անցեալք ի յայնկոյս Տօրոսի.....

Քանի որ հոռոմէական ճամբան Ծովքի մօտէն կ'անցնէր եւ ուրեմն իրենց համար վտանգաւոր պիտի ըլլար Մասուտի անցքի պահուն:

Ծովքի մօտ հոռոմէական ճամբան կ'երկարէր, մին դէպի հարաւ՝ Թիւ պաշար, Զօկմա, Պէրէճիք, իսկ միւսը՝ վը շարունակուի ուղիղ դժով Սամսատ կամ Սամսատ:

Սամսատ անցնող ճամբուն վրայ, Բեսունի մօտ Կէօքսու (Նէհր Աղրազ) գետակին վրայ շինուած է շատ մեծ, կամարակապ բարձր աշէրով կամուրջ մը՝ Ալթուն Բէօփրիւ: Պատմութենէ ծանօթ է որ այս կամուրջին մօտերը է. դարուն (Ք. Ա.) տեղի ունեցաւ Ուրարտացիներու եւ Ասորեստանցիներու միջեւ մեծ պատերազմը, ուր Ուրարտացիները յաղթուած քաղաքացան դէպի հիւսիս, Հայաստան:

* * *

Մենք շատ սեղմ կերպով մը ծանօթացուցինք Եփրատի արեւելեան ափին վրայ գտնուող հոռոմէական կայանները եւ տըւինք հակիրճ պատմականը այդ վայրերուն:

Իրականին մէջ Եփրատի վերի աւազանը ունի հայ պատմութեան մէջ մեծ ու կարեւոր դերք մը: Նոյնը կրնանք ըսել նաեւ Եփրատի Սիւրիական մասին համար՝ ուր Ուրարտական, Արշակունիական եւ Կիլիկեան շրջանին՝ հայերը ունեցած են պատմական դրուագներ, որոնք ըստ արժանւոյն չեն ներկայացուած մինչեւ հիմա:

Տոքթ. Յ. Տէր ՂԱԶԱՐԵԱՆ

ՍՈՒՐԱՏ Դ. ԱՆՑՔԸ ՍԵԲԱՍՏԻԱՅԷՆ ԵՒ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ

1635

Սուլթան Մուրատ Դ. 30 Մարտ 1635ին, զինուորական պատրաստութիւններն աւարտելէ ետք, 24 տարեկան հասակին, Իւսկիւտարէն ճամբայ ելաւ ասեղ բանակով մը Պարսկաստանի դէմ: Անցնելով Էսկիշէհր, Գոնիա, Կեսարիա քաղաքներէն, բանակը Մայիս 22ին հասաւ Սեբաստիա, ուր մնաց 16 օր¹:

Բանակին յառաջխաղացումը մինչեւ Սեբաստիա տեղի ունեցած էր շատ դժուրակ պայմաններու մէջ, հեղեղանման անձրեւներու, ձիւնի եւ բուռն փոթորիկներու պատճառաւ: Սեբաստիայէն առաջ, Ափարթը Էօզլիի հանգրուանը ամբողջովին ծածկուած էր ցեխով: Մինչեւ Սեբաստիա, բանակը 40-50 անգամ անցած էր կամուրջներէ եւ ճախճախուտներէ: Անթիւ ու անհամար բեռնատար անասուններ ցեխերուն մէջ խրելով մեռած էին: Այլափ կամուրջը անցնելու ատեն զինուորները եւ անասունները զերար հրմշտկելով գետը ինկած էին եւ խեղդուած: Սեբաստիա ժամանումէն ետք, ամբողջ 8 օր բուռն հովերն ու տեղատարափները անպակաս եղած էին: Օր մը կայծակներն ու որոտումները տեւած էին անընդհատ 4-5 ժամ: Հո-

ղը այնքան կակղացած էր որ կարելի չէր եղած վրան կանգնել: Գիշերներն ալ օդը չէր մեղմացած: 11րդ օրը բուռն հովին հետ կարկուտ տեղացած եւ աննկարագրելի որոտում մը ծագած էր²:

Սուլթանը ճամբուն վրայ ամէն տեղ ծայրայեղ խստութեամբ պատժած էր ամէն անոնք որ ժողովուրդը հարստահարած կամ նախապէս հարստահարած ըլլալէ ետք պետական պաշտօններու կոչուած էին: Անգթօրէն պլխատել եւ մորթաղեր ընել տուած էր թէ՛ փաշաներ եւ թէ՛ գաւառներ: Նիկոմիդիոյ եւ Նիկիոյ (Իզնիք) միջեւ Գաղղըլը տերպետի մէջ պլխատել տուած էր Կալաթալը չելեպի անուն վեթերան երիւցէրի մը, որ իր հրամանին հակառակ, Պոլիս ձգած էր անկար երիւցէրի մը, Սիտի Կաղիի մէջ՝ Գարաբըրանօղլու նախկին ապրտամբ մը եւ անոր զաւակները, Պարտաղլի մէջ՝ Մանիսայի սանձաղ պէյի Թուրիւնի Հասան փաշան, որ Գարամանիայի նախկին պէյերպէյին էր, Իսհաղլի մէջ՝ Գարա-աղաճի գաւառ Արապօղլու Մուստաֆան եւ անոր բանտակիցները՝ Գոնիայի մէջ՝ ուր ձիւրուն ոտնակոխ ընել տուած էր անոնց զիակները, Պէյշէհրի

1. Յովհաննէս Սեբաստացի եւ Սահակ Երէց (Աւետարան, Երուսաղէմ, թ. 3349) ճիշտ նշանակած են ժամանման օրը, բայց Սեբաստիա կայքը հաշուած են 17 օր, յայտնօրէն մեկնումի օրն ալ միասին հաշուելով:

2. Սուլթանին պաշտօնատարներէն մէկը, որ բանակին ընկերացած է, օրը օրին արձանագրած է:

է բանակին հանգրուանները եւ արշաւանքի ընթացքին պատճառ կարեւոր դէպքերը: Օրագրութիւնը հրատարակած է Տոքթ. Ա. Սիւհեյլ Իւնփեր «Տէօրտիւնճիւ սուլթան Մուրատը Բեկան Սեֆերի քրոնիկոսի» վերնագրով (Պեկին-թիւ 61, էջ 547-576): Այս տեղեկութիւնները եւս յիշ օրագրութենէն:



մէջ՝ Սոմա Արսլան աղան իբրեւ մեղսակից սուլթան Օսմանի սպանութեան, Պորի մօտ Նազարաղէն Չաիրիի մէջ՝ ձեւակերպութեամբ ծխած ըլլալուն համար, Կեսա-րիոյ մէջ՝ Կէօքտերեղիդատէ գատուն, Գո-նիայի մէջ՝ Շէհլա Մեհմետ անուն գա-տուն, Պէյշեհիբի սանճագ պէյի Բեսքինլի Ալի փաշան իր անդթութեան եւ հարստա-հարութեանց համար, եւ մորթադերձ ընել տուած էր պոսթանճի մը, որ սուլթանին ստորագրութիւնը կեղծելով կեղեքած էր սանճագ պէյինները³։ Մեծ կամ փոքր ամէն մարդ սարսափահար էր, որովհետեւ սուլ-թանին անհաճոյ խօսք մը կամ արարք մը, նոյնիսկ զրպարտութիւն մը, անմիջապէս կը պատժուէր մահուամբ։

Սուլթանին անողոր եւ անազորոյն դա-տաւորի համբաւը անկարելի է որ Սերաս-տիա հասած չըլլար իր ժամանակէն իսկ առաջ։ Սերաստիա ժամանումին յաջորդող 10 օրուան ընթացքին միջոցառական ա-ղէտները, ինչպէս նաեւ երեք շաբաթ է ի վեր բանակին կրած այդ անհանդուր-ժելի դժուարութիւններն ու տառապանքը, որոնցմէ զերծ էր մնացած նաեւ նոյն ինքն սուլթանը, իրաւամբ կրնային ամէնուն խորհիլ տալ թէ այդ միջոցին սուլթանը բարեացակամ տրամադրութիւններով չէր կրնար տողորուած ըլլալ եւ, հետեւաբար, խոհմութիւնը կը պահանջէր զգուշանալ որեւէ արարքէ որ կրնար անոր բարկու-թիւնը զրգոել կամ անոր տհաճութիւն պատճառել նոյնիսկ անտեղիօրէն։

Եւ սակայն, հակառակ այս բոլորովին աննպաստ պայմաններուն, Սերաստացի Ներսէս վարդապետ, որ յետոյ բարձրացաւ Սիսի կաթողիկոսական աթոռը, քաջասրբ-տութեամբ մը որ զարմանք կը պատճառէ այսօր եւ յաջորդութիւն կրնայ համար-ուիլ, խորհրդակցութեան կը հրաւիրէ Ս. Նշանի Անդրէաս, Ս. Հրեշտակապետի Նի-կողայոս, Ս. Անապատի Յովհաննէս, Ս. Գրիգորի Մկրտիչ եւ Սնդրակատար Ս. Աստուածածնի Յովհաննէս եպիսկոպոս-

3. Նախմա, Գ. էջ 241 եւ Համմեր, Թ. էջ 255-259։

ները, քաղաքին երեւելիները, «Իշխան»-ները եւ քահանաները, եւ կ'առաջարկէ սուլթանին դիմել խնդրելու համար Ս. Սարգիս փոքր մատուռին նորոգութեան եւ «հրպարակական» եկեղեցիի վերածելու մասին արտօնութիւն, 1592ին մղկիթի վե-րածուած Ս. Լուսաւորիչ եկեղեցիին փո-խարէն։ Ժողովը համամիտ կը գտնուի դի-մումին, որ կը կատարուի անշուշտ պա-րագային պարտադրած պատշաճութեամբ եւ նուէրներու մատուցումով։ Սուլթանը կը շնորհէ խնդրուած արտօնութիւնը։ Սե-րաստիոյ պատմագիր Յովհաննէս եպիսկո-պոս Սերաստացի կը գրէ իր անտիպ պատ-մութեան մէջ. «Տէր քաղցրացոյց զսիրտ արքային ի վերայ տառապեալ ազգիս մե-րոյ»։ Ի՞նչ դժբախտութիւն է որ ժողովին խորհրդակցութիւնները, դիմումին պա-տրաստութիւնները, սուլթանին ներկա-յութեան արտասանուած խօսքերը չեն պահուած։

«Կոնդակ» մը — տեսակ մը տեղեկագիր — զոր տեսած է Յովհաննէս Սերաստացի եւ որ մինչեւ այսօր երեւան չէ ելած, ան-շուշտ մանրամասնօրէն պահած էր անուն-ները ամէն անոնց որ մատուռին նորոգու-թեան եւ ընդարձակման նպատած են, ինչպէս նաեւ վերաշինութեան մասին տե-ղեկութիւններ։ Ի չգոյէ այս վաւերագրին, Յովհաննէս Սերաստացիի քանի մը տողե-րը, ինչպէս նաեւ ժամանակակիցներու կողմէ դրուած երկու ձեռագրական յիշա-տակարան միայն կը կազմեն այս չինու-թեան պատմութեան աղբիւրները։

Ըստ Յովհաննէս Սերաստացիի, Ներսէս վարդապետ, անշուշտ քանդելով հինը, տաճարին ներքին մասը կը շինէ քարաշէն եւ ամբակառոյց կամարներով, իսկ ար-տաքին մասը փայտակերտ, մեծ աշխա-տանքով եւ նեղութիւն կրելով։ Շէնքին աւարտումէն ետք (1636), խոյրու եւ զը-ւարակներու զենումով մեծահանդէս նա-ւակաւորէ կը կատարուի ի մեծ ուրախու-թիւն տարեցներուն եւ փոքրերուն։

Սերաստիոյ Ս. Սարգիս եկեղեցին պահ-ուած եւ 1646ին գրուած Յայաւաւուրքի մը

յիշատակարանին համաձայն⁴, «հրաման եղեւ նորոգման սուրբ Նշանի վանացն եւ սուրբ Սարգիս եկեղեցւոյս։ Զոր բազում աշխատութեամբ եւ մեծաւ Զանիւ Սերաս-տացի Ներսէս վարդապետն վերստին կանգնեաց եւ նորոգեաց եւ պայծառ շին-ուածովք, զսուրբ Սարգիս կաթողիկ եկե-ղեցին Սերաստիո, եւ զժամամուտն եւ զայլ խցերն կրկին նորոգեաց եւ հիւրա-նոցս եւ սեղանատունս սահմանելով։ Քան-զի սա եղեւ քաղաքիս կրկին Զօրաբաբէլ, որ բազում վիշտ եւ զնեղութիւնս կրելով յանաւրինացն, շինեաց եւ հաստատեաց զսուրբ Սարգիս եկեղեցիս...»։

Գրելը կ'աւելցնէ թէ մանաւանդ Ս. Սարգիս եկեղեցիին քահանաները եւ ժո-ղովուրդը աշխատած են «ընչիւր եւ ստա-ցուածովք»⁵։ (1640 Օգոստոս 29)

Երկրորդ յիշատակարանը, որ շատ հաւանականաբար գրուած է նոյն ինքն Ներսէս վարդապետին թելադրութեամբ ի-րեն համար ընդօրինակուած Աստուածա-շունչի մը մէջ, քանի մը բառով միայն կը յիշատակէ Ս. Սարգիս եկեղեցիին վերա-շինութիւնը, բայց կ'աւելցնէ քանի մը տեղեկութիւններ, որ կը պակսին առաջին երկու աղբիւրներուն մէջ։ Ներսէս վար-դապետ կը ձեռնարկէ «ի շինումն սուրբ եկեղեցեաց», եւ ոչ միայն հիմնովին կը նորոգէ Ս. Սարգիսը, այլ եւ Ս. Աստուա-ծածին եկեղեցին (Ս. Նշանի վանքին հա-մանուն աղօթատեղին), ինչպէս նաեւ Յոյներուն Այ Նորիկի (Ս. Գէորգ) եկեղե-ցին, որ շատոնց ի վեր խախտու վիճակ մը ունէր, բայց Յոյները չունէին մարդիկ որ իրենց եկեղեցիով եւ զործերով զբա-ղէին։

Երեք աղբիւրներն ալ կը յիշեն Ներսէս

վարդապետին կրած նեղութիւնները այս վերաշինութեանց առեւ, եւ Երկու յիշա-տակարաններուն զրիչները, Յովհաննէս Սերաստացիին աւելի բացայայտօրէն, զա-նոնք կը վերագրեն «անօրէններուն»։

Շատ հաւանական է որ Մուրատ Գ. նը-պաստաւոր տրամադրութիւններ ունէր Հայոց նկատմամբ, եւ ամէն պարագայի մէջ անբարեացակամ չէր, ինչպէս կը տես-նուի արդէն. եկեղեցիներուն վերաշինու-թեան համար իր շնորհած արտօնութեանէն։ Իր բարեացակամութիւնը անբացատրելի չէ։

1632ին, Երբ սպարապետ Սուրբեւ փա-շային սպանութիւնը Մուրատի դէմ ըմ-բոստացուցած էր բանակը եւ Պոլսոյ ենի-չերինները կը սպառնային սուլթանը գահ-ընկէց ընել եւ գուցէ նոյնիսկ սպաննել, իր երիտասարդ քարտուղարը՝ Մուսա, որ տիպիկցի հայու մը դաւակն էր, ինքզինքը զոհած էր սուլթանին կեանքը փրկելու համար⁶։

Զէյթունցի Սալիլ փաշա, երկու անգամ մեծ-վեղիր եւ երեք անգամ մեծ ծովակալ, որ Մուրատին եւ անոր և զըրայրներուն կեանքը փրկած էր խելագար սուլթան Մուսթաֆայի երկրորդ գահակալութեան շրջանին (1622-1623), Հայ էր ծագումով, եւ այս պարագան չէր կրնար անձանօթ ըլլալ սուլթանին, որուն կ'ընկերանար նաեւ, մեծ-վեղիրի փոխանորդի հանդա-մանքով, սուլթանին հաւատարիմ հայա-սէր Մուրթազա փաշան։ Ըստ Գրիգոր Դա-րանաղցի, Ապագա փաշան ալ Հայոց մա-սին դովհաստով խօսած էր ամէնուն, եւ հետեւաբար սուլթանին ալ, որուն մտեր-մութիւնը կը վայելէր այդ ատեն⁷։ «Ան-օրէնները» պէտք չէ ուրեմն փնտռել սուլ-

4. Թ. Գուշակեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սերաստիա, (Հանդ. Ամս. 1928, էջ 491-492, Թ. 145)։

5. Նոյն, անդ, 1922, էջ 470, Թ. 1։

6. Գրիգոր Դարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 252-254։

7. Սալիլ փաշայի մասին տես Հայկ Պէրպէրեան, «Զէյթունցիներուն անկախութեան ֆերմանը»

(Կոչնակ, 6, 20 եւ 27 Յունուար 1951)։ - Մուր-թազա փաշայի հայասիրութեան մասին տես Գ. Դարանաղցի, անդ, էջ 519, 529, Թ. 549, Յա-կոր Կարենցի, Տեղագիր վերին Հայոց, հր. Կ. Կոստանեանց, էջ 56 եւ շար., Գ. Սրուանձ-տեանց, Թորոս Աղբար, Բ. էջ 397։ - Ապագայ փաշայի հայասիրութեան մասին տես Գ. Դա-րանաղցի, անդ, բազմաթիւ տեղեր։

թանին առաջանիլին մէջ, որոնք արդէն Սերաստիայէն մեկնած էին երբ վերաշինութեանց ձեռնարկեց Ներսէս վարդապետ: Պէտք է, հետեւաբար, ենթադրել թէ սուլթանին մեկնումէն ետք, Սերաստիոյ մահմադարական իշխանաւորներէն ոմանք են որ զժողովութիւններ յարուցած են: Թերեւս այսպէս բացատրուին Մուրատի հրամանով, Յ Յուլիան, էրզրումի մէջ Սերաստիոյ արէյլերպէի պոսնալը Օսման (կամ Ալի) փաշային, ինչպէս նաեւ Սերաստիոյ հարստահարիչներէն սիւրահի Ըշրէ Եահայի եւ անիշէրի Չափուչլատէ Սադապաշի սպանութիւնները ժողովուրդին բողոքին վրայ⁸:

Սուլթան Մուրատ Երեւանը եւ Թաւրիզը գրաւելէ ետք, Վան – Պիթլիս – Տիարպէ – քիր – Մալաթիա – Գանդալ – Սերաստիա ուղիով Պոլիս վերադարձաւ 25 Դեկտեմբեր 1635ին: Վերադարձին մէկ օր միայն մնաց Սերաստիա:

Սերաստիայէն առաջ բանակին հանդերձ ուանները եղած են Ալաճա-Հիսար, Գան-

դալ, Տէյիւրմէն Քէօյիւ եւ Ճիսր-ի Հիսար⁹:

Գ. Սրուանձտեանց հետեւալ աւանդութիւնը լսած է Սերաստիոյ մէջ Ս. Սարգիս եկեղեցիին վերաշինութեան մասին. «Ներսէս վարդապետ Սոյո... Սեւաստ կը գրէր նուի, Օսմ. արքայն Սուլթան Մուրատ Դ-ին կը դիմաւորէ, անոր Բաղդատէ վերադարձին, Եկեղեցական հանդիսիւ: Օրհնութեամբ եւ ընծաներով, հաճութեան եւ մեծարանաց կ'արժանանայ մեր Հոգեւոր Տէրն, եւ կը պատմէ Ս. Լուսաւորչի դէպքը, ու կը խնդրէ որ իրեն շնորհուի: — Փոխանակ այս մէկին, եօթն եկեղեցի շինելու շնորհը կ'ընեմ քեզ, կ'ըսէ Սուլթանն. եւ ահա այն օրն կը շինուի անոր մօտ արդի Ս. Սարգիս եկեղեցին. այս առթիւ թաղուած էր սոյն եկեղեցւոյ մէջ մեր Հոգեւոր Տէր Ներսէսն, իսկ վեց եկեղեցիքն զեղերու մէջ շինուած են, ամենքն ալ Ս. Սարգիս անունով¹⁰:

Գեղեցիկ օրինակ մը թէ ինչ կ'արժեն աւանդութիւնները:

ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐԵԱՆ

8. Նախագ, Գ. էջ 250:

9. Ա. Սիւհեյլ Իւնվերի վերոյիշեալ յօդուածը, էջ 256:

10. Թորոս Աղբար, Ա. էջ 156:

ԲԺՇԿԱՊԵՏ ՄԻՔԱՅԷԼ ԱՐՍԼԱՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՍՏԵՂԱԳՆԱՅ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Յունուարի մէջ, Տոք. Սանտրոյ Սանտրելի տեսակցութիւն մը ունեցած է Բժշկապետ Միքայէլ Արսլանի հետ, որ ներկայիս իտալիոյ մէջ մեծագոյն ուսումնասիրողներէն մէկն է անգլալեզուային համալսարաններու՝ բնախօսական տեսակետներով: Իր այս տեսակցութիւնը հրատարակած է վեներիոյ *Gazzettino* լրագրին մէջ, որմէ կը բարգմանեմք ներկայ գրութիւնը (26. Ա. 1960. էջ 3):

Բոլոր բարդ դժուրներու մէջ, որոնք այս տարիներուս, այս ամիսներուս ուղղուած են տիեզերական անջրպետը գրաւելու, մարդը, ո՛չ մետաղէ, այլ ոսկրէ եւ միսէ կազմուած, եւ մանաւանդ ուղեղով, շիւղերով եւ զգայարաններով օժտուած, ամէնէն կատարեալն է, բայց միեւնոյն ժամանակ ամէնէն զգայունն ու դիւրաբեկը: Վարժեցման մարդը գրաւելու այդ միջոցը, որ զինքը այնքան կ'առիւնքէ, դիւրին դժուր մը չէ. յետ մեծամեծ արբանեակներու, յետ բարձրագոյն կարգի անասուններու, ամէնէն վերջ՝ միջոցի ասպարէզին վրայ պիտի երեւի նաեւ մարդը:

Արդեօք ասիկա իրական գրաւում մը պիտի ըլլայ, թէ համառօտ թուի՞նք մը, որքան ալ հերոսական, քանի մը յանդուգն եւ խիզախ հերոսներու կողմէ, խմբակի մը՝ որ կը սկսի աւանդալէպերու ժամանակէն Պրոմիթեոսով եւ Իկարով: Ուղեցինք այցելել այն սակաւաթիւ անձներէն մէկուն՝ որ այսօր իտալիոյ մէջ ամէնէն նշանաւոր հեղինակութիւններէն մէկն է՝ միջոցային բժշկութեան, Ուսցչալ. Միքայէլ Արսլանի, որ Փատովայի Համալսարանի Ականջ-ուռնդ-կոկորդարութեան մաս-

նաճիւղի վարիչն է: Ուսցչալ. Արսլան երեսուն տարիէ ի վեր կ'ուսումնասիրէ մարդկային լաբիրինթոսը, որ հաւասարակշռութիւնը պահելու պաշտօնն ունի:

ԱՆՋՐՊԵՏԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ

«Մարդը, ինչպէս ուրիշ որեւէ մարմին, որ այս երկրիս վրայ կը գտնուի, ինչպէս քար մը, ինչպէս որեւէ անկենդան մարմին մը – սկսաւ Ուսցչալ. Արսլան – բնական զիտութեան աչքով զիտուած՝ ծանրութիւն մըն է. այսինքն՝ ձգողութեան օրէնքներուն ենթարկուած մարմին մը: Այն կը ծնի եւ իր ամբողջ կեանքը կ'անցընէ միջավայրի մը մէջ՝ որ ամբողջովին ենթարկուած է այս օրէնքներուն, եւ աւելի ալ, որովհետեւ ան բոլոր կենդանի էակներու մէջ՝ ամէնէն շատ կը զգայ այս ոյժը, ըլլա՛յ նիւթապէս, ըլլա՛յ նաեւ որոշ կերպով մը՝ հոգեբանապէս: Դարերէ ի վեր, հաղարաւոր տարիներէ ի վեր, մարդկութիւնը ապրած է միշտ այս միջավայրին մէջ, ուր կայ վեր եւ վար, աջ ու ձախ կողմ մը: Երկրէն դուրս անջրպետը, աստեղանաւերու կամ արուեստական արբանեակներու սենեակը, ուր ծանրութեան